ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2024 թվականի N 955 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 205-Ն ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1321-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 205-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) հավելվածի 5.2-րդ կետում «սահմանված լինելու դեպքում՝ նաև» բառերը փոխարինել «սահմանված լինելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով և ձևաչափով գործատուի կողմից ներկայացվում է» բառերով, իսկ «հարկային մարմնի կողմից սահմանված և գործատուի կողմից հաստատված տեղեկանք» բառերը՝ «տեղեկատվություն» բառով.

2) հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հետագա հաշվետու ժամանակահատվածներում վճարված եկամտային հարկի գումարները վերադարձնելու համար վարկառուն բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում միայն սույն կարգի 5.2-րդ կետով սահմանված դիմումը, եթե մինչև այդ ներկայացված՝ սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը մնացել է անփոփոխ: Վարձու աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով և ձևաչափով գործատուի կողմից ներկայացվում է եկամտային հարկի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը (նախկինում տրամադրված տեղեկատվության փոփոխության դեպքում՝ ներկայացվում է ճշգրտված տեղեկատվություն):».

3) հավելվածի 7-րդ կետը «փոփոխությունների դեպքում» բառերից առաջ լրացնել «(բացառությամբ հիփոթեքային վարկի պայմանագրի մարման ժամանակացույցի)» բառերով.

4) հավելվածի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Վարկառու ֆիզիկական անձանց որևէ հիմքով հաշվետու ժամանակահատվածի համար ավել վերադարձված գումարների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձն իրականացվում է հաջորդ հաշվետու ժամանակահատվածի և (կամ) նախորդ հաշվետու ժամանակահատվածի (ժամանակահատվածների) համար եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացված չլինելու դեպքում՝ նաև այդ ժամանակահատվածի (ժամանակահատվածների) վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարներից՝ դրա մասին տվյալ ֆիզիկական անձանց ծանուցելու և նրանց համաձայնությունն ստանալու միջոցով: Ծանուցելուց հետո եռամսյա ժամկետում սույն կետում նշված համաձայնության կամ վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարների բացակայության կամ գումարների ոչ ամբողջությամբ վերադարձման դեպքերում

հարկային մարմինն իրականացնում է պարտավորությունների կատարման վերաբերյալ ծանուցում, և սույն կետում նշված վարկառու ֆիզիկական անձինք ավել վերադարձված գումարները ծանուցմամբ նշված ժամկետում վճարում են համապատասխան գանձապետական հաշվին: Ծանուցմամբ նշված ժամկետում չվճարելու դեպքում դրանց գանձումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 1321-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) հավելվածի 5.2-րդ կետում «սահմանված լինելու դեպքում՝ նաև» բառերը փոխարինել «սահմանված լինելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով և ձևաչափով գործատուի կողմից ներկայացվում է» բառերով, իսկ «հարկային մարմնի կողմից սահմանված և գործատուի կողմից հաստատված տեղեկանք» բառերը՝ «տեղեկատվություն» բառով.

2) հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հետագա հաշվետու ժամանակահատվածներում վճարված եկամտային հարկի գումարները վերադարձնելու համար վարկառուն բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում միայն սույն կարգի 5.2-րդ կետով սահմանված դիմումը, եթե մինչև այդ ներկայացված՝ սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը մնացել է անփոփոխ: Վարձու աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով և ձևաչափով գործատուի կողմից ներկայացվում է

եկամտային հարկի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը (նախկի-նում տրամադրված տեղեկատվության փոփոխության դեպքում՝ ներկայացվում է ճշգրտված տեղեկատվություն)։».

3) հավելվածի 7-րդ կետը «փոփոխությունների դեպքում» բառերից առաջ լրացնել «(բացառությամբ հիփոթեքային վարկի պայմանագրի մարման ժամանա-կացույցի)» բառերով.

4) հավելվածի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Վարկառու ֆիզիկական անձանց որևէ հիմքով հաշվետու եռամսյակի համար ավել վերադարձված գումարների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձն իրականացվում է հաջորդ հաշվետու եռամսյակի և (կամ) նախորդ հաշվետու եռամսյակի (եռամսյակների) համար եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացված չլինելու դեպքում՝ նաև այդ եռամսյակի (եռամսյակների) վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարներից՝ դրա մասին տվյալ ֆիզիկական անձանց ծանուցելու և նրանց համաձայնությունն ստանալու միջոցով։ Ծանուցելուց հետո եռամսյա ժամկետում սույն կետում նշված համաձայնության կամ վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարների բացակայության կամ գումարների ոչ ամբողջությամբ վերադարձման դեպքերում հարկային մարմինն իրականացնում է պարտավորությունների կատարման վերաբերյալ ծանուցում, և սույն կետում նշված վարկառու ֆիզիկական անձինք ավել վերադարձված գումարները ծանուցմամբ նշված ժամկետում վճարում են համապատասխան գանձապետական հաշվին։ Ծանուցմամբ նշված ժամկետում չվճարելու դեպքում դրանց գանձումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով։»։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի օգոստոսի 1-ից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ